ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ «ԵՎԳԻՆԵ» ԴՐԱՄԱՆ ՄՈՆՐԵԱԼԱՀԱՅ ԲԵՄՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ

...Շիրվանզադեն, որքան և թերություններ ունենա, դարձյալ կմնա այն հեղինակը, որ տանում է մեր գրականությունը դեպի Եվրոպա:

Վ. Տերյան[1]

Ալեքսանդր Շիրվանզադեն «Եվգինե» երեք գործողությամբ դրաման, որը գրել է 1901 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, նվիրաբերել է իր մորաքրոջ որդուն՝ հայ անվանի դերասան, Շիրվանզադեի ստեղծած կերպարների անզուգական մարմնավորող Հովհաննես Աբելյանին: «Եվգինեն» առաջին անգամ ներկայացվել է նույն թվականի հոկտեմբերի 29-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության նորաբաց թատրոնի[2] լեփ-լեցուն դահլիճում՝ Գևորգ Պետրոսյանի բեմադրությամբ: Ներկայացմանը մասնակցել են այն ժամանակվա հայ դերասանական առաջնակարգ ուժերը՝ Հովհաննես Աբելյան (Միհրան Ալվերդյան), Օլգա Մայսուրյան (Եվգինե Ալվերդյան), Մարի Զաբել (Հռիփսիմե Միրվելյան և Մարթա Տերտերյան), Մատթեոս Աղայան (Համազասպ Վարսամյան), Հովհաննես (Օնիկ) Ստեփանյան (Աբգար Սուլթանյան), Գևորգ Պետրոսյան (Գաբրո Ազարյան), Մարիամ Ավետյան (Զարուհի Գալամքարյան), Գրիգոր Ավետյան (Բարսեղ Գալամքարյան), Օլգա Գուլազյան (Երմոնե): Ներկայացումը, որին ներկա է եղել հեղինակը, ունեցել է մեծ հաջողություն: Թատերախոս Գ. Վանցյանի վկայությամբ՝ հանդիսատեսն այն ընդունել է ջերմորեն և ըստ արժանվույն՝ «տեսնելով մեր առաջին վիպասանին մեջ եւ առաջնակարգ թատրերգակի շնորհք», թատրոնից հեռանալով «այն հաճելի գիտակցութեամբ, որ Սունդուկեանի տեղը թափուր չի մնալու այսուհետեւ»[3]: Դրվատական հոդված-

---

[1] **Վահան Տերյան**, Հայ գրականության գալիք օրը, Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր երկրորդ, Եր., 1961, էջ 272:

[2] Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնի հանդիսավոր բացումը կայացել է 1901 թ. փետրվարի 8-ին: Այդ թատրոնի թատերական բացառիկ կառուցվածք ներկայացնող փառահեղ շենքը (այժմ՝ Վրաստանի Ռուսթավելու անվան թատրոնի շենք) Թիֆլիսի կենտրոնում՝ Գոլովինսկի պողոտայում, իր միջոցներով կառուցել է արվեստի երկրպագու, հայ մեծահարուստ Եսայի (Իսայի) Փիթոևը (1844-1904):

[3] **Գրիգոր Վանցեան**, Եւգինէ. թատերգութիւն երեք գործողութեամբ Շիրվանզադէի, «Անահիտ», Դ տարի, մարտ 1902, թիւ 3, էջ 64 (նույն խոսքերը բերված են նաև ամսագրի հաջորդ համարում տպագրված հոդվածի շարունակության վերջում՝ թիւ 4, էջ 89):

ներ են տպագրվել ինչպես հայկական[4], այնպես էլ Կովկասի ռուսական մամուլում: Եղել են նաև քննադատական հոդվածներ, որոնց մեջ չնայած խիստ զգացվում է կողմնակալությունը, բայց միաժամանակ, առանձին դեպքերում, նույնպես նշվում են դրամայի արժանիքները[5]: Հետագայում Շիրվանզադեին՝ որպես դրամատուրգի, ավելի բարձր գնահատական է տվել հայ մեծատաղանդ բանաստեղծ Վահան Տերյանը: 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսի Երաժշտական ընկերության դահլիճում «Հայ գրականության գալիք օրը» թեմայով իր հրապարակային դասախոսության ժամանակ Տերյանն ընդգծում է. «Դրամայի մեջ որքան էլ ինքնատիպ, խոշոր և հետաքրքրական լինի Սունդուկյանը – նա առանձին երևույթ է, նա դարձյալ ունիկում է իր «Պեպո»-ով, իսկ ուղի հարթողը Շիրվանզադեն է: Չպետք է մոռանալ, որ կենցաղագրական և հոգեբանական դրամային **գրական** լեզվով ամենից շատ զարկ է տվել Շիրվանզադեն, և որքան էլ թերություններ ունենան նրա գրվածները, նրա նշանակությունն այդ ասպարեզում շատ է մեծ ու նշանակալից»[6]:

«Եվգինե» դրաման առաջին անգամ տպագրվել է «Թատրոն» հանդեսում 1903 թ.[7]: Նույն թվականին այն լույս է տեսել առանձին գրքով[8], ինչպես նաև զետեղվել է Շիրվանզադեի «Երկերի ժողովածուի» չորսհատորյակի երկրորդ հատորում[9]: Հետագայում «Եվգինե» դրաման տարբեր արհեստավարժ թատերախմբեր և թատերասերներ բազմիցս բեմադրել են թե՛ Անդրկովկասում, թե՛ Ռուսաստանում, թե՛ այլ երկրների հայաշատ վայրերում. առանձնապես 20-րդ դարի առաջին տասնամյակում[10]:

Ուշագրավ է, որ Շիրվանզադեի «Եվգինե» դրաման թարգմանվել է նաև վրացերեն (թարգմանիչ՝ Ղազար Կարապետյան) և 1910 թ. լույս տեսել Թիֆլիսում՝ «Սախալիո գազետի» լրագրի հավելվածի 9-14 համարներում: Այդ դրաման վրացերեն բեմադրվել է Վրաստանի մի շարք քաղաքներում:

---

[4] Տե՛ս, օրինակ, **Ռ.**, Հայոց թատրոն, «Նոր-դար», 1 նոյեմբերի 1901, № 161, էջ 2: «Հայոց թատրոն», «Լումայ», 1902, № 1, էջ 248-255: Գ. Վանցյանի նշված հոդվածը՝ «Անահիտ», 1902, թիւ 3, էջ 60-64, թիւ 4, էջ 87-89 և այլն:

[5] Տե՛ս, օրինակ, **Վ. Նալբանդեան**, Մի նոր պիէս. «Եւգինէ», դրամա երեք գործ. հեղ. Շիրվանզադէի, «Մշակ», 1 նոյեմբերի 1901, № 243, էջ 1-2:

[6] **Վ. Տերյան**, նշվ. աշխ., էջ 271:

[7] Տե՛ս **Շիրվանզադէ**, Եւգինէ, դրամա երեք գործողութեամբ, «Թատրոն», Գրական եւ թատերական հանդես (հինգերորդ տարի), № 1, գիրք Թ, Թիֆլիս, 1903, էջ 20-57:

[8] Տե՛ս **Շիրվանզադէ**, Եւգինէ, դրամա 3 գործողութեամբ, Տպ. «Վերեիչեւ եւ Կամենմախեր», Թիֆլիս, 1903:

[9] Տե՛ս **Շիրվանզադէ**, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ, Տպ. «Վերեիչեւ եւ Կամենմախեր», Թիֆլիս, 1903, էջ 291-366: Հայ անվանի գրաքննադատ Հրանտ Թամրազյանը **Շիրվանզադեի** «Երկերի ժողովածուի» (տասը հատորով) վեցերորդ հատորում (1959, էջ 533) «Եվգինե» դրամայի վերաբերյալ տված ծանոթագրություններում թյուրիմացաբար նշում է, որ «Եվգինեն» զետեղվել է 1903 թ. հրատարակված չորսհատորյակի չորրորդ հատորում:

[10] Ավելի մանրամասն տե՛ս **Բաբկեն Հարությունյան**, XIX-XX դարերի հայ թատրոնի տարեգրություն (1801-1922), հատոր երկրորդ (1901-1911), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1980:

20-րդ դարի երկրորդ տասնամյակում և հետագայում «Եվգինե» դրաման շատ ավելի քիչ է բեմադրվել՝ իր տեղը զիջելով Շիրվանզադեի մյուս դրամաներին: Թե՛ Հայաստանի, թե՛ արտերկրի հայկական թատրոնների խաղացանկերում այն գրեթե չի հիշատակվում: Եղել են հազվադեպ, հատուկենտ ներկայացումներ:

Եվ վերջապես, հեռավոր Կանադայում 1974 թ. նոյեմբերի 10-ին Մոնրեալի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու «Մամիկոնյան» մշակութային միության թատերախումբը տեղի Ութրըմոն ավագ դպրոցի շքեղ թատերասրահում ներկայացրել է «Եվգինե» թատերգությունը՝ բեմադրիչ և դերուսույց Ս. Քեքլիկյանի[11] ղեկավարությամբ:

Այստեղ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ այն փաստին, որ «Մամիկոնյան» թատերախումբը գործում է 1962 թվականից: Ինչպես նշում է այդ եկեղեցու «Բուրաստան» պաշտոնաթերթը[12], 1962-ի փետրվարի 21-ին և 22-ին Մոնրեալի հայ համայնքի մի քանի խանդավառ անդամներ, հիմնականում պոլսահայեր, ցանկանալով օտար ափերում վառ պահել հայ մշակույթը, ձեռնամուխ են եղել «Վարդանանք» ողբերգության բեմադրությանը[13]: Ներկայացումը հանդիսականներն ընդունել են ջերմությամբ, իսկ դերակատարները՝ ոգևորված հաջողությունից, որոշում են ստեղծել մի թատերախումբ և իրենց առաջին ներկայացման պատվին այն անվանել «Մամիկոնյան»: 1964-ի դեկտեմբերին «Մամիկոնյան» թատերախումբը համալրվում է նոր ուժերով, ընդլայնում իր գործունեության շրջանակը և վերակազմավորվում է որպես «Մամիկոնյան» մշակութային միություն: Սակայն, անհասկանալի պատճառներով, որոշ աղբյուրներում որպես «Մամիկոնյան» մշակութային միության գործունեության սկիզբ հիշատակվում է 1959 թվականը[14]: Մինչդեռ, մեր կարծիքով, դա 1962 թվականն է, երբ, ինչպես արդեն նշել ենք, «քանի մը խանդավառ անձեր, թատերական արուեստի հրապոյրէն մղուած», «21 եւ 22 Փետրուար թւականներուն»

---

[11] **Մելմա Քեքլիկյան,** (1927-2004), սփյուռքահայ օպերային երգչուհի, դերասանուհի, ազգային գործիչ: Ավարտել է Կահիրեի կոնսերվատորիան: Եղել է Կահիրեի պետական օպերային թատրոնի երգչախմբի անդամ, դերեր է ստանձնել հյուրախաղերի եկած Միլանի «Լա Սկալա» և Բելգրադի օպերային թատրոնների մենակատարների հետ: 1982 թ. տեղափոխվել է Մոնրեալ, հանդես եկել մենահամերգներով, ելույթ ունեցել կանադական հեռուստատեսությամբ, երգել Մոնրեալի օպերային թատրոնում («Քույր Անջելիկա», «Ֆաուստ», «Ռիգոլետտո», «Ռոմեո և Ջուլիետ», «Դոն Կարլոս», «Մակբեթ», «Սամսոն և Դալիլա» և այլ օպրաներում): 1976 թ. հիմնել է Մոնրեալի «Արմենյան» թատերախումբը: 1987 թ. ծննդյան 60-ամյակի առթիվ պարգևատրվել է Կանադայի կառավարության պատվոգրով, որը հանձնել է անձամբ Կանադայի վարչապետը:

[12] Եկեղեցական, գրական և մշակութային ամսաթերթ (հետագայում՝ կրոնաբարոյական, մշակութային երկամսաթերթ), որը լույս է տեսնում 1963 թ.: Ցավոք, այնպիսի հեղինակավոր հանրագիտարանում, ինչպիսին է «Հայ Սփյուռք հանրագիտարանը», (Եր., 2003) (տե՛ս էջ 335 և 341), տեղ է գտել անճշտություն «Բուրաստան» երկամսյա (չնայած այն սկզբում եղել է մեկամսյա) հանդեսի լույսընծայման սկիզբ համարվել է 1964 թվականը:

[13] Տե՛ս «Մամիկոնեան մշակութային միութիւն», «Բուրաստան», Գ տարի, թիւ 23-24-25, մայիս-յունիս-յուլիս, 1965, էջ 15:

[14] Տե՛ս, օրինակ, «Հայ Սփյուռք հանրագիտարան», էջ 338:

ներկայացրել են երկու արար «Վարդանանք» ողբերգությունից[15]: Հետևաբար, մեր կարծիքով, միանգամայն անհասկանալի ու անընդունելի է «Մամիկոնյան» մշակութային միության գործունեության սկիզբ համարել 1959 թվականը: Լավագույն դեպքում «Մամիկոնյան» մշակութային միության գործունեության սկիզբ կարելի է ընդունել 1962 թվականը («Մամիկոնյան» թատերախմբի գործունեության սկիզբը), իսկ ավելի ճշգրիտ՝ 1964 թվականը:

Այժմ վերադառնանք «Եվգինե» ներկայացմանը: Այն ունեցել է բավականին մեծ հաջողություն և ջերմորեն է ընդունվել հանդիսականների կողմից: Ինչպես նշում է «Մամիկոնյան» մշակութային միության ավագ անդամ, բազմավաստակ դերասան Խ. Տետեյանը[16] (ով, «իբրեւ վեթերան բեմասէր», նույնպես մասնակցել է ներկայացմանը՝ «փոքր դերով մը, մտածելով որ փոքր դեր չկայ, այլ կայ փոքր դերասան»[17]), «Դասական բնոյթ կրող թատերախաղ մըն է «Եւգինէ» թատերախաղը զոր այնքան յաջող կերպով բեմադրուեցաւ: Զմայլելի եւ ճոխ բեմայարդարում: Զգեստաւորում: Խաղարկութիւն: Ահա երրորդութիւն մը, հրամցուած լուրջ հանդիսասրահի մը մէջ»[18]: Մամուլից քաղված տեղեկությունները վկայում են, որ երկար ամիսների ընթացքում կատարված թատերական փորձերը տվել են ցանկալի արդյունք. բոլոր դերակատարներն էլ հաջողությամբ են մարմնավորել իրենց ստանձնած կերպարները, քանի որ «արուեստը այնպիսի մոգական ոյժ մը ունի իր մէջ որ կ'ազնուացնէ ամէն անոնց, որոնք կը հպին այդ արուեստին: Եւ դերակատարները, ոչ միայն հպած էին արուեստին, այլ եւ ամուր կառչած էին անոր»[19]:

Եվգինե Ալվերդյանի դերում հանդես է եկել Անահիտ Շիշմանյանը, ով «կը գերեվարէ հանդիսականը իր քնքոյշ ձայնով, զուսպ եւ ազնուական խաղարկութեամբ մը: Անոր մէջ կան չափ, կշիռ եւ մտածում: Յաճախ արցունքի հովիտ մըն է ան»[20], իսկ Եվգինեի ամուսնու՝ փաստաբան Միհրան Ալվերդյանի դերը կատարել է Նուպար Արսեն Մամուրյանը: Ամուսինների դերակատարների համահունչ խաղը մեծ տպավորություն է թողել հանդիսականների վրա և արժանացել բարձր գնահա-

---

[15] «Մամիկոնեան մշակութային միութիւն»..., էջ 15:

[16] **Խորէն Տետեյան,** (1901-1980), սփյուռքահայ դերասան, Զմյուռնիայի «Արտավազդ» թատերախմբի հիմնադիրներից (1919), եղել է Վ. Փափազյանի և Հ. Աբելյանի խաղընկերը: 1922 թ. տեղափոխվել է Սալոնիկ, որտեղ հիմնադրել է հայկական թատերախումբ՝ Հ. Զարիֆյանի մասնակցությամբ: 1930-1963 թվականներին բեմական գործունեություն է ծավալել Կահիրեում, իսկ այնուհետև՝ Կանադայում: Հրատարակել է «Ժպիտ» (1947) խորագրով երգիծական պատմվածքների ժողովածուն և «Երիտասարդի մը հուշատետրը…» (1949) վիպակը, գրել է «Թատերական ակնարկներ» (1963), «Կենսագրական գիծերս» գործերը և մոտ մեկ տասնյակ թատերգություններ:

[17] **Խորէն Տէտէեան**, Շիրվանզատէի «Եւգինէ» թատերախաղը Մոնթրէալի բեմին վրայ, «Բուրաստան», Ժ տարի, թիւ 132, դեկտեմբեր, 1974, էջ 6: Ի դեպ, Խ. Տետեյանը նույն վերնագրով, բայց փոքր-ինչ այլ բովանդակությամբ, «Թատերական» խորագրի տակ հոդված է տպագրել նաև «Քուլիսում» (տե՛ս ծանոթագրություն 22):

[18] Նույն տեղում, էջ 4:

[19] Նույն տեղում:

[20] Նույն տեղում:

տականի՝ կարծես թե խաղացել են ոչ թե սիրող, այլ արհեստավարժ դերասաններ: Իրոք, «բեմի երկու հսկաներ, ոչ սիրողներ կարծէք, այլ փրոֆէսիոնէլներ, բեմին վրայ, իրարու մրցակից, իրար գերազանցելու խանդավառութիւնով եւ սակայն իրարմով միայն յաղթական», ընդ որում՝ «կրնայ պատահիլ որ այդ զոյգին առնչութեամբ գնահատանք մը գրուած, կրնար բան մը պակսեցնել այդ հիասքանչ խաղարկութիւններէն»[21]:

Այստեղ նպատակահարմար ենք համարում մի փոքր մանրամասնորեն անդրադառնալ ներկայացման գլխավոր հերոսների դերակատարներ, շնորհալի սիրող դերասաններ Ա. Շիշմանյանին և Ն. Մամուրյանին:

Եվգինեի դերակատար Անահիտ Շիշմանյանը պոլսահայ հանրահայտ ուսուցիչ և դերասան Լևոն Շիշմանյանի հարսն է, այն Շիշմանյանի, ով հետագայում դարձել է եգիպտահայ բեմի սիրելին, ով Երվանդ Օտյանի և Միքայել Կյուրճյանի ներկայությամբ խաղացել է Չարշլը Արթին աղայի դերը և արժանացել առաջին մրցանակի[22]:

Իսկ Միհրանի դերակատար, բազմաշնորհ մտավորական Նուպար Մամուրյանը, ով եղել է, իր իսկ արտահայտությամբ, «թատրոնի ախտէն վարակեալ մը տարիներէ ի վեր»[23], Կահիրեի օպերայի մեներգիչ, գնահատված բարիտոն Հովսեփ Մամուրյանի որդին է: Նուպար Մամուրյանը ծնվել է 1941 թ. Ալեքսանդրիայում: Նախնական կրթությունն ստացել է Պողոսյան ազգային և անգլիական վարժարաններում, իսկ այնուհետև ուսումը շարունակել է Ալեքսանդրիայի պետական համալսարանում, որն ավարտել է 1964 թ. և ստացել քիմիկոսի և երկրաբանի որակավորում: 1964-1967 թթ. դասավանդել է Պողոսյան ազգային վարժարանում: Ն. Մամուրյանը դեռևս դպրոցական հասակից օժտված է եղել գրելու ձիրքով, աշխատակցել է «Արև» թերթին, ելույթներ ունեցել որպես բանախոս: 1967 թ. հաստատվել է Մոնրեալում, աշխատակցել է Բոստոնի «Պայքար» թերթին՝ հանդես գալով ազգային-քաղաքական և գրական հոդվածներով: 1975 թ. Արշավիր Կյոնճյանի, Հարություն Արզումյանի և Վահե Քեթլիի հետ հիմնել է Թեքեյան մշակութային միության «Ապագա» շաբաթաթերթը, որն ավելի ուշ հրատարակվել է երեք լեզուներով՝ հայերեն, անգլերեն և ֆրանսերեն: Ն. Մամուրյանը եղել է այդ թերթի առաջին խմբագիրը և մնացել այդ պաշտոնում մինչև 1979 թվականը:

Վերադառնալով «Եվգինե» ներկայացմանը, նշենք, որ մյուս դերակատարները նույնպես արժանացել են հանդիսականների ջերմ ընդունելությանը և բարձր գնահատականին: Այսպես, օրինակ, խոսելով Մարթա Տերտերյանի դերակատար, նախկին ուսուցչուհի Սոնյա Գա-

---

[21] Նույն տեղում, էջ 4, 6:

[22] Տե՛ս **Խորէն Տէտէեան**, Շիրվանզատէի «Եւգինէ» թատերախաղը Մոնթրէալի բեմին վրայ, «Քուլիս», Կ. Պոլիս, № 672, 15 դեկտեմբերի 1974, էջ 4-5:

[23] **Արսէն-Նուպար Մամուրեան**, Խորհրդածութիւններ «Եւգինէ»-ի յաջող բեմադրութենէն ետք, «Բուրաստան», Ի տարի, թիւ 133, հունվար, 1975, էջ 6:

զանճյանի խաղի մասին, թատերախոսը հիացմունքով արձանագրել է. «Ահա լրջութեան մարմնացումը, պատուախնդրութեան ախոյեանը, մերթ քնքոյշ եւ մերթ անողոք, գրաւիչ եւ հուսկ ուրեմն վանողական: Ազնուափայլ տիկինը անցաւ բոլոր ճամբաներէն հարազատօրէն եւ կերպարանափոխութիւնները եղան բնական եւ համոզիչ»: Այնուհետև՝ Արշալույս Մենենտյանը (Զարուհի Գալամքարյան), «բնութենէն մշտաժպիտ այս տիկինը, յաջողեցաւ դառնալ հեգնաժպիտ, չարաժպիտ» և «կրցաւ պատկերացնել խառնակիչ, չարամիտ եւ բամբասող կնոջ տիպարը», Արա Գուլյանը (Բարսեղ Գալմաքարյան) հաջողությամբ «ներկայացուց հարազատ պատկերը անուս բայց գործնական գիւղացիին»[24] և այլն: Մնացած դերերը կատարել են Վահագն Արապյանը (Գաբրո Ազարյան), Շանթ Էորերը (Համազասպ Վարսամյան), Գրիգոր Գանարը (Աբգար Սուլթանյան), Անուշ Տողրամաճյանը (Հռիփսիմե Միրվելյան), Հերմինե Կուտսուզյանը (Երմոնե):

Ականատեսների վկայությամբ, ներկայացումն արժանացել է հանդիսականների ջերմ ընդունելությանը. «Սիրողներու այդ արուեստասէր փունջը, պատուով դուրս եկաւ այս բեմադրութենէն և անոնց լուրջ և զուսպ խաղարկութիւնը գնահատուեցաւ երկարատեւ ծափահարութիւններով»[25]: Այդպիսի հաջողության հասնելու համար թատերախումբը մի քանի ամիս շարունակ կատարել է փորձեր շնորհաշատ արվեստագետ Սելմա Քեքլիկյանի ղեկավարությամբ: Ի վերջո, տքնաջան աշխատանքը տվել է իր արդյունքը: Այդ աշխատանքի հայրենասիրական, ազգապահպան նշանակությունը, իրոք, դժվար է գնահատել: Ահա թե ինչ է վերապատմում «Եվգինե» ներկայացման նախապատրաստական աշխատանքների մասին ինքը՝ գլխավոր հերոսի դերակատար Արսեն-Նուպար Մամուրյանը. «Բոլոր դերակատարները … դեռ կարող չէին երեւակայել թէ ինչ չափով կատարելագործուած խաղարկութիւն կը սպասուէր իրենցմէ: Արագօրէն թաւալող օրերը եկան զգացնել իւրաքանչիւր դերակատարի իր ստանձնած դերին լրջութիւնը. բոլորին համար յստակ էր որ լաւագոյն արդիւնքի մը հասնելու համար անհրաժեշտ էր յարատեւ աշխատանք տանիլ. տակաւին մինչեւ վերջին շաբթուան օրերուն, հակառակ երկարատեւ ամիսներու կրկնակի փորձերուն, անոնք կատարելապէս վստահ չէին որ պիտի կարողանային որակաւոր ներկայացում մը հրամցնել հայ հասարակութեան:

Այսուհանդերձ, ներկայացման օրը վերջին արարի վերջաւորութեան, 600-ի մօտ հանդիսականներու երկարատեւ ծափերը ու ապա քուլիսներու ետին եւ յաջորդական օրերու ընթացքին եղած գնահատանքի անվերապահ խօսքերը, եկան մեզ փաստել թէ փորձերու եօթ-

---

[24] **Խորէն Տէտէեան**, Շիրվանզատէի «Եւգինէ» թատերախաղը Մոնթրէալի բեմին վրայ, «Բուրաստան», Ժ տարի, թիւ 132, էջ 6:

[25] **Խորէն Տէտէեան**, Շիրվանզատէի «Եւգինէ» թատերախաղը Մոնթրէալի բեմին վրայ, «Քուլիս», Կ. Պոլիս, № 672, էջ 5:

նամսեայ շրջանը տուած էր իր ամբողջական արդիւնքը: Անկասկած որ այս յաջողութիւնը ամբողջութեամբ կը պարտինք բեմի անխոնջ ու փորձառու փրոֆէսիոնէլի մը, յանձին՝ Տկն. Սելմա Քէքլիքեանի որուն բարձրորակ ղեկավարութեան տակ շատ բան սորվեցանք»[26]:

Այնուհետև Ա. Մամուրյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոնրեալահայերը, ինչպես ցույց տվեց «Եվգինեի» բեմադրությունը, ունեն կարող ուժեր՝ «որակաւոր ամաթեօր դերասաններ, որոնք բացարձակ եւ մշտական նուիրումով պատրաստ պիտի ըլլան ծառայելու հայ թատրոնին», բայց չունեն մշտական գործող թատերախումբ, առաջարկում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի ծխական խորհրդին՝ «կազմել հայ մնայուն թատերախումբ մը զաղութիս լաւագոյն ոյժերով, որ պիտի գործէ եկեղեցւոյ հովանաւորութեան տակ», և գալիս այն եզրահանգման, որ «այսպիսի գործի մը յաջողութիւնը հոգեկան մեծ գոհացում պիտի պատճառէ թատերախումբին մաս կազմող սիրողներուն եւ միեւնոյն ժամանակ առաւելագոյն չափով սատարած պիտի ըլլայ հայ մշակոյթին»[27]:

«Եվգինե» թատերգությունից մի տեսարան՝ Սելմա Քեքլիկյանի բեմադրությամբ, ներկայացվել է նաև 1980 թ. մարտի 16-ին եկեղեցու «Մարի Մանուկյան» սրահում՝«Մամիկոնյան» մշակութային միության 20-ամյա գործունեությանը նվիրված հանդեսի ժամանակ: Դերերը կատարել են Անահիտ Շիշմանյանը (Եվգինե) և Վահագն Արապյանը (Գաբրո Ազարյան)[28]:

Եզրափակելով մեր խոսքը Մոնրեալի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու «Մամիկոնյան» մշակութային միության թատերախմբի Շիրվանզադեի «Եվգինե» թատերգության բեմադրության մասին, վստահությամբ կարող ենք արձանագրել, որ, չնայած բազում դժվարություններին, տարբեր երկրներից Մոնրեալում հանգրվանած և օտար միջավայրում գործող մեր հայրենակիցները, որոնցից յուրաքանչյուրն «իրեն հետ բերած է հայ բարքը, հայ մշակոյթը, հայ լեզուն եւ հայ ապրելու վճռական կամքը»[29], կարողացել են կատարել հսկայական ազգապահպան աշխատանք՝ ևս մեկ անգամ ապացուցելով, որ հայը ի վիճակի է դիմակայել ցանկացած դժվարության և հաղթահարել այն:

Բանալի բառեր – *դրամա, թատրոն, «Մամիկոնյան» թատերախումբ, Շիրվանզադե, «Եվգինե», Մոնրեալ, Սելմա Քեքլիկյան*

АНАИТ БЕКАРЯН – ***Драма Ширванзаде “Евгине” на сцене армянского театра в Монреале.*** – В ряде городов Канады в разное время возникали армянские любительские труппы. В 1962 г. при армянской церкви в Монреале был ос-

---

[26] **Արսէն-Նուպար Մամուրեան**, նշվ. աշխ., էջ 6:

[27] Նույն տեղում, էջ 6-7:

[28] Տե՛ս **Վ. Ք.**, Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի 20-Ամեակի Հանդիսութիւնը, «Բուրաստան», տարի ԺԶ, թիւ 192-193, մարտ-ապրիլ, 1980, էջ 13:

[29] **Վազգեն** վարդապետ (հովիվ), Առաջին պատգամս, «Բուրաստան», Ե տարի, թիւ 42, յունուար-փետրուար, 1967, էջ 1:

нован театр “Мамиконян”. В ноябре 1974 г. здесь впервые в Канаде талантливый режиссёр Сельма Кекликян поставила драму Александра Ширванзаде “Евгине”. Артисты-любители продемонстрировали довольно высокий уровень актёрской игры. Спектакль имел большой успех и долгое время не сходил со сцены.

Ключевые слова: *драма*, *труппа, театр “Мамиконян”*, *Ширванзаде*, *“Евгине”*, *Сельма Кекликян*

ANAHIT BEKARYAN – *Drama “Yevgine” by Shirvanzadeh on the Armenian Stage in Montreal.* – Armenian amateur theatre companies were first formed in the cities of Canada inhabited with Armenians. Back in 1962, a group of enthusiasts from the Armenian community in Montreal established “Mamikonyan” Theatre Company with an intention to preserve the Armenian culture on a foreign land. In 1974, “Yevgine”, a drama by Shirvanzadeh, was first staged in Canada under the direction of a prominent director Selma Keklikian. Due to the intensive rehearsals and the high level of professionalism of the amateur actors, the performance was a huge success.

Key words – *drama*, *theatre*, *“Mamikonyan” Theatre Company*, *Shirvanzadeh*, *“Yevgine”*, *Montreal*, *Selma Keklikian*